

## ԱՄԱԼՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ Բանասիրական գիտությունների թեկնածու

### ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՄԵՋ ԱԶԳԱՅԻՆ ԲՆԱԿՈՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏՈՒԿ ԳԾԵՐԻ ՎԵՐԱՐՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻԶՈՑՈՎ ԿԱՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԵՆՈՄԵՆՈՒԹՅԱՆ

**Բանալի բառեր՝** ազգային գաղափարաբանություն, գեղագիտական արժեհամակարգ, գրական հերոս, վիպասան, պատմավեպ, հայկական ֆենոմենոլոգիա, ժողովրդական մտածողություն, վիպական սյուժե, խիզախման փիլիխովայություն, ֆենոմեն, պոեմ:

Կա հանրահայտ մի ճշմարտություն. ազգը որպես էթնիկ միավոր կենդանի օրգանիզմ է, և նրա գոյապահպանման համար անհրաժեշտ գործուներ են՝ լեզուն, մշակույթը, պատմական հիշողությունը, ինքնագիտակցությունը, ազգային բնավորությունը, հոգեկերտվածքը, դիմագիծը, զգացումը (ազգասիրություն, հայրենասիրություն, հպարտություն), ոգին, ընտանիքը, կենցաղը, էթնիկական ավանդույթները և այլն: Դրանք նաև կարևոր նախադրյալներ են ազգային գաղափարաբանության ձևավորման համար, որն ազգային արժեհամակարգն անխաթար փոխանցում է սերնդեսերունդ:

Մեր ժողովրդի ազգային բնավորության լավագույն գծերը՝ հայրենասիրություն, խիզախություն, միասնականություն, անձնազոհություն, տոկունություն և այլն, բոլոր ժամանակներում լավագույնս դրսերպվել են հայ մարդու մեջ, անգամ այն ժամանակ, երբ նա օտար երկրում ու միջավայրում է գտնվել: Օրինակները շատ ու շատ են՝ Վիլյամ Սարոյանից մինչև Միսաք Մանուչյան ու Վալերի Մադարով... Բազմաթիվ հայորդիներ իրենց քաջությամբ ու նվիրումով հերոսացել

\*Հոդվածն ընդունվել է 10.11.2016:

Հոդվածը տպագրության է երաշխավորել Գրիգոր Նարեկացի համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնը:

Են այլ ժողովրդների ազգային-ազատագրական պատերազմներում իրենց մեջ դրսնորելով ազգային բնորոշ հատկանիշներ:

Ինչով է բացատրվում երևույթը: Ժառանգականությա՞նք, արդյոք, ուր էական դերակատարություն է ստանձնում գենետիկան, դաստիարակությա՞նք, ազգային սովորույթներով ու բնավորությա՞նք, որ զարգանում-կոփվում են հազարամյակների ընթացքում, արվեստների ներուժո՞վ, սոցիալ-տնտեսական իրավիճակներո՞վ, Ճակատագրի պարտադրած դժվարություններո՞վ, թե..., «Թե»-երը կարող են վերջ չունենալ, սակայն դրանցից յուրաքանչյուրի մասնակցությունն այդ ամենում չի կարելի անտեսել: Ես այսօր ուզում եմ կանգ առնել այն միջոցների վրա, որոնք էապես նպաստում են ազգային բնավորության կոփման ու լավագույն գծերի զարգացման գործին: Դրանցից ամենաառաջնայիններից մեկը, թերևս, գրականությունն է, որը կարելի է ասել, ազգային ոգու խոսնակի գլխավոր դերը վերցրել է իր վրա: Ամենավաղնջական ժամանակներից մինչև հիմա սերունդները դաստիարակում են մեր մեծագույն գեղագետների ստեղծած գեղարվեստական կոթողներով: Եվ քանի որ հայոց ազգը մշտապես եղել է ազատագրական պատերազմների մեջ՝ շրջապատված անթիվ ոստիններով, գրական երկերում շեշտը դրվել է ազգի փրկության ու ազատության համար պայքարում ինքնազոհության, նվիրումի և նման այլ վեհ ու վսեմ զգացմունքների ու հատկանիշների վրա: Այդպես եղել է, այդպես էլ կա ... Խորենացու, Դավթակ Քերթողի, Նարեկացու, Պեշիկթաշյանի, Աբովյանի, Շաֆֆու, Մուրացանի, Դուրյանի, Սիամանթոյի, Վարուժանի, Թումանյանի ստեղծագործություններով քանի-քանի սերունդներ են դաստիարակվել: «Վերք Հայաստանի» վեպի Աղասու կերպարը անբաժան ուղեկիցն է ամեն մի հայի: Եվ ոչ միայն: Հիշենք Տերյանի խոսքը Շաֆֆու «Կայծեր»-ի ու նրա գլխավոր հերոսներից մեկի՝ Ավանի մասին: Վերջինս մեծ պոետի ամենասիրած գրական հերոսն էր:

Իսկ Խահիակյանի խոստվանությամբ. «Մուրացանի հզոր տաղանդը լրիվ ընդգրկել է հայ ժողովրդի կյանքը: Ինչ որ գրել է նա, գրել է սրտի ցավով, արյունով: Համոզմունքով, վառ հավատով: Նա խորունկ հայրենասեր էր և ժողովրդասեր: Նա տոգորված էր տանջվող, շահագործվող ժողովրդի վշտով: Նա տոգորված էր արյունոտվող հայ ժողովրդի մեջ վշտով: Գրողի կոչումը նա բարձր էր պահում. նա գրում էր, գիտեր գեղարվեստական խոսքի ներգործուն, վերաստեղծող ուժը, սրտաբուխ պատգամի կրթիչ, հոգեվոխող զորությունը:

Հայ ժողովուրդը չախտի մոռանա նրան ոչ միայն որպես մեծատաղանդ գրողի, այլև որպես մի պատկառելի, ազնվական անձնավորության, որ ընդունակ էր իր գաղափարների համար ամեն կարգի գոհաբերության»: (1)

Ղժբախտաբար, հայ գրողը դարերի ընթացքում ստիպված է եղել իր ստեղծագործությունները դարձնել մայր ժողովրդի ազատագրական պատերազմների տարեգրությունը: Մուրացանը դեռ շատ երիտասարդ էր ու, ինչպես ասում են, «գրող լինելու» հեռավոր ակնկալությունն անգամ չուներ, երբ ձեռնամուխ եղավ «Ուուզանի» ստեղծմանը՝ արդեն թիֆլիսում հաստատվելուց հետո: Եվ նրա կերտած «հայրենասեր օրիորդի»՝ Ուուզանի կերպարը միանգամից գրավեց հասարակության ուշադրությունը: Անգամ հեղինակի անունն էր անհայտ, երբ «Ուուզանը» ներկայացվեց բեմադրության: Ժամանակին «Կավկազ» թերթն ավետում էր, որ անհայտ հեղինակի գործ է այն, միայն հետո պարզվեց, որ «Ուուզանի» հեղինակը մի հասարակ երիտասարդ է, որն աշխատում է որպես գործակատար: Ասել է թե՝ առաջին իսկ պահից Մուրացանի մեջ խոսում էր շատ կարևոր ու արժեքավոր մի հատկանիշ և՝ բազում լավագույն գծերի հետ, համեստությունը: Հետևողությունը մեկն է՝ ազգային բնավորությունն ու գծերը գեղարվեստական գրականության մեջ կարող է անթերի մարմնավորել միայն այն անհատը, ով դրանք խորապես կրում է իր մեջ: Տեղն է հիշել Չարենցի տողերը. «Ինչ ունեցել է ժողովուրդը քո, //հնում, անցյալում, լուսավոր ու վեհ, //ողջը հավաքել ու քեզ է տպել»: (2) Մուրացանը ևս, անշուշտ, իր ազգի լավագույն գծերի կրողն էր ու նրա «ոսկե երակը»: Վկան՝ «Ուուզան», «Գևորգ Մարզպետունի», «Անդրեաս երեց», «Նոյի ագռավը», «Առաքյալը» և գրողի մյուս գրքերն են, դրանք ամբողջապես նվիրված են հայոց երկրի անկախության, ազատության ու պետականության ամրապնդման խնդիրներին՝ ազգային միաբանության գաղափարի գեղարվեստական մարմնավորմանը՝ բացառիկ վարպետությամբ:

Երևույթի մեկնությունը տանում է նաև դեպի ազգային հոգեբանության ակունքները, որտեղ այն մեկնաբանվում է այսպես. «Ինչոր ժամանակահատվածում էթնոսի հոգեկերտվածքի մեջ մտնող հատկությունների, արժեքային կողմնորոշումների և այլ գծերի մի խումբ՝ տիրապետող, մյուսների նկատմամբ գերակշռող է դառնում՝ դրսնորվելով նրա վարքում և որոշակի հուզական երանգ հաղորդելով նրա կենսագործունեությանը: Այսպես, երբ երկիրն ու

ազգը պատերազմական հարաբերությունների մեջ են գտնվում մեկ այլ ազգի հետ, ապա ուժեղանում է տվյալ ազգի էթնոկիրների հայրենասիրական և մարտական ոգին, քանի որ նրա վարքի վրա վճռական ազդեցություն են գործում բնավորության կառուցվածքի մեջ մտնող այնպիսի գժեր, որոնք «հայրենասիրություն» կոչվող հոգեբանական կազմավորման բարդույթի մաս են կազմում»: (3)

Ֆրանսիացի անվանի հոգեբան Գուստավ լը Բոնն ընդգծում է ազգային բնավորության հետևյալ կարևորագույն հատկանիշները՝ քաջությունը, էներգիան, հաստատակամությունը, կամքը, գաղափարի համար անձնագործությունը, ընդունակությունը, անհաղթահարելի համառությունը, ինքնատիրապետումը, նախաձեռնության ոգին, բարոյականությունը՝ որպես օրենքների նկատմամբ սերնդեսերունդ փոխանցվող հարգանք: Ես կավելացնեյի՝ գրված և չգրված օրենքների նկատմամբ: Իսկ, ընդհանրապես, մեր ազգն առաջիններից մեկն է, ով ստեղծել է իր օրենքները, այս մասին է խոսում նաև դեռևս Վաչագան Բարեպաշտի կազմած կանոնագիրքը: Հիրավի, ճիշտ է ասված, որ եթե որևէ ազգ ընդունակ չէ ինքնատիրապետման, նրան տիրում են ուրիշները:

Հայ ժողովուրդը մաքառումների դժվարին ճանապարհ է անցել՝ մշտապես պայքարելով իր գոյության, ազատության համար՝ կրելով բազմաթիվ կորուստներ ու գրկանքներ: Սակայն, չնայած այդ ամենին, նա շարունակում է տուկալ, դիմակայել ու պատվով հաղթահարել բոլոր տեսակի մարտահրավերները՝ շնորհիվ իր ազգային մտածողության ու բնավորության անփոփոխ էության (սուբստանց) բարձր որակների՝ ուժեղ կամքի, ազատատենչ հոգու, ազգային արժանապատվության, անկոտրում ոգու: Այս և նման հատկանիշները նպաստում են հայի՝ որպես ուրույն տեսակի՝ ֆենոմենալ գծերի անբողջացմանը: Հենց այդ ինքնատիպ, խիստ առանձնարկված հատկանիշների շնորհիվ է, որ ձևավորվում է հայկական ֆենոմենոլոգիան, այս դեպքում՝ ոգու գիտությունը, որն առանձին ուսումնասիրության խնդիր է: Մեր նպատակն է ցույց տալ, թե կենսահաղորդակցությունից բացի, եթե կարելի է այսպես ասել, ինչ միջոցներ գոյություն ունեն, որոնք նպաստում են հայի՝ մեր տեսակի բնորոշ գծերի շարունակական զարգացմանն ու հարստացմանը:

Ժամանակի փորձությունները չեն ազդել մեր ազգի էթնիկ ինքնատիպության վրա: Հայը պահպանել է իր գենոտիպը: Պետք է ասել, որ մի շարք հանգամանքներ ևս նպաստել են դրան: Դրանցից մեկն էլ հայոց գենետիկան է: Այսինքն՝ հայերը հազարամյակներ

շարունակ, չնայած առկախ վտանգին, չեն ձուլվել այս կամ այն ազգին, չեն ուժացվել: Եվ դրա պատճառը պարզ է. «Մտածումով, հղացումով, կառուցղական ոճով, լեզվով և ռազմական կորովով արհական՝ հայերն իրենց աշխարհապրումով ալափական են: Այդ պատճառով անհունորեն խորն է նրանց նվիրումի զգացումը, զորավոր՝ տոկալու կամքը, անխախտ՝ համոզումը, իմաստալից՝ ստեղծագործական երկունքը, խիզախ՝ ռազմական ոգին և խանդալից՝ հայրենասիրությունը: Այս ուժերն են, որ պահում են լուսատենչ այս ազգը...հայն իրեն զորավոր է զգում իր արժեքներով» (4) (Հ. Ասատրյան):

Գործնական հայրենասիրության, սխրանքի, ազնվության, ինքնազոհության, բացառիկ խիզախումի ու նվիրումի օրինակներն, այս, շատ են: Սակայն կանգ առնենք Մուրացանի գեղագիտական համակարգի՝ նրա դավանած գաղափարախոսության վրա, որն այսօր էլ արդիական է: Ինչպես գիտենք, գրողն իր գեղագիտական ըմբռնումները ներկայացնում է հերոսների միջոցով: Կոնկրետ «Գևորգ Մարգաբետունի» պատմավեպում յուրաքանչյուր հերոս ազգային բնավորության տարբեր գծեր է դրսենորում, իսկ գիշավոր հերոսի մեջ ամբողջացած են բոլոր լավագույն հատկանիշները, որոնք էլ տանում են միաբանության: Մուրացանի հերոսները՝ Ռուգան, Գևորգ Մարգաբետունի, Աշոտ Երկաթ, Սահակ Սևադա, Ցիկ Ամրամ, Գոռ, իրենց մեջ մարմնավորում են մեր ազգային բնավորության էական կողմերը՝ հայրենապաշտություն, ազնվություն, ոգեղենություն, պատվախնորություն, միաբանություն, անձնականը հայրենյաց շահին զոհելու պատրաստակամություն: Որակներ, որոնք հատուկ են ազգի մեր տեսակին և այսօր էլ դրսենորվում են սահմանին կանգնած զինվորների մեջ: Ապրիլյան քարօրյա պատերազմի ժամանակ երիտասարդ հայորդիներ Ռոբերտ Աբաջյանը, Արմենակ Ուրֆանյանը, Քյարամ Սլոյանը, Սարգիս Սահակյանը, Սասուն Մկրտչյանը, Միշա Աղաջանյանը, Վլադիմիր Նարինյանը, Ռոբերտ Աբրահամյանը և էլի շատ շատեր՝ իրենց մեջ կրելով Գևորգ Մարգաբետունու, Աշոտ Երկաթի, Ռուգանի անօրինական սխրանքի զգացողությունը, իրենց անձնազոհությանը, ազգային արժանապատվության բարձր գիտակցությամբ դիմագրավեցին թշնամու մարտահրավերները: Իրենք իրենցով կենդանի պատդարձան՝ արյամբ պաշտպանելով հայրենիքը: Ի դեպ, բանաստեղծ Վ. Հակոբյանն այդ մասին պոեմ է գրել՝ «Կենդանի պատ», որտեղ մեջբերված են այդ հայորդիների կենդանի խոսքերը՝ մահից առաջ:

Մեծ է անցյալի խորհուրդը: Անցյալը նպաստում է ներկայի ամբողջացմանը և ապագայի կերտմանը, որովհետև անցյալը միայն անցյալ չէ, այլև մեր պատմությունն է: Նաև ասում են՝ պատմությունը դադարում է պատմություն լինելուց միայն այն ժամանակ, եթե չի ազդում արդիականության վրա:

Եթե ստեղծագործությունը ներգործություն չի ունենում կյանքի վրա, ուրեմն, այն գրականություն չէ, ավելին, ինչպես Հրանտ Մաթևոսյանը կասեր՝ մեռելածին է: Գեղարվեստական գործն արժնորվում է առաջին հերթին իր գործառնական նշանակությամբ: Հիմա ես ուզում եմ կատարել մի փոքրիկ դիտարկում՝ որքանով են Մուրացանի հերոսները «մասնակցում» մարդու կերտմանը, նրա աշխարհայացքի ու կերպարի ձևավորմանը: Դիմենք որոշակի գուգադրումների:

Այսպես՝ Ռուզան դրամայի հերոսուիկին՝ նույն ինքը Ռուզանը, որ մարմնավորում է հայրենասեր օրիորդի կերպարը, իր անձը գոհում է հայրենյաց շահին՝ «Եթե պետք է զոհ, ապա թող զոհեն ինձ»: (5) Այդ որոշումը նա կայացնում է ինքնուրույն, հոժարական, գիտակցաբար, առանց վարանելու: Ակամայից հարց է առաջանում. ինչպիսի ներքին ուժ է թաքնված այս օրիորդի մեջ, ինչքան մեծ է նրա սերը առ հայրենին, որ նա իր անձը պատրաստական գոհում է հայրենիքին՝ միայն թե իր հայրենակիցները հաղթեն, հայրենիքն ազատ լինի: Մահվանից առաջ իրաժեշտի նրա խոսքը հնչում է որպես պատգամ. «Այժմ մնաք բարով, հայրենի լեռներ, հայրենի երկինք, հայրենի արև, ձեզ վրա նայում եմ ես վերջին անգամ և ձեզ նվիրում իմ ետին շունչը, իմ օրինությունը... Մնաս բարով և դու, հայոց ժողովուրդ, քեզ սիրեցի ես կաթողին սիրով և քո փրկության սեղանի վրա դնում եմ ահա՛, իմ ողջակեզզը... Ընդունի՛ր այս զոհը և աղոթիր աստծուն, որ սա լինի վերջինը այն անբավ զոհերի, որ քո որդիքը բերին քեզ կամակար...»: (6)

Ազգի ու հայրենիքի ազատության գաղափարը վեր է ամեն ինչից: Նույն անձնազնությամբ ու նվիրումի փիլիսոփայությամբ է գործում Գևորգ Մարգաբետունին: Նա արդեն որդեգրել է իր հավատամքը, վճռել իր գերագույն նպատակը, իր առաքելությունը. «Երկուսից մինը. կամ կիաղթանակեն, կամ թե իմ խմբով իսպառ կօնչվեմ: Ես չեմ կարող նստել իմ բերդում և իմ կյանքը խնայել... Եթե իմ եղբայրակիցները մեռնում են, ես ինչու պիտի ապրեմ, մի՞թե նրանց կորուստը ողբալու համար: Երդվում եմ ձեր առաջ, երդվում եմ հավիտենականի անունով, երդվում եմ իմ հայրենիքի արևով և այս

սուլը գերեզմանով, որ ես չեմ վերադառնալ այլս իմ ընտանյաց գիրկը, չեմ մտնիլ իմ հարկի տակ, մինչև վերջին հագարացին չհալածեմ հայրենի սահմաններից: Ես պիտի ապացուցանեմ, որ ամրոցների և իշխանական զորության մեջ չէ անփոփովուն հայրենիքի ուժը, այլ նրա որդիների անձնվիրության մեջ...Հայի աստվածը մեզ օգնական, հայի խաչը մեզ ապավեն...»: (7)

Հայրենիքի հանդեպ պարտքի զգացունը ենթադրում է բարձր առաքինություն ու վեհանձնություն, արժանապատվության, խղճի ու պատասխանատվության խորը գիտակցում: Սա, ինչպես ասում են, խիզախման փիլիսոփայություն է: Մարզպետունու, Ռուզանի, մեր գրականության լավագույն հերոսների անձնազոհությունը փոխանցվել է դարեդար, և այսօր մեր հերոս զինվորը՝ Ռոբետ Աբաջյանը, նույնպես հայրենիքի ազատության զոհասեղանին բերեց իր ողջակեզզը, նա մինչև վերջին շունչը պայքարեց, չհանձնվեց, նա նախընտրեց ինքնազոհությունը: Մահվանից առաջ նրա խոսքը հնչում է որպես պատգամ. «Իմ վերջին նռնակ, իմ վերջին ընկեր, իմ ընկերների վրեժն առեք...Վերից նայում է Տերը: Ով որ մարտական դիրք տա թշնամուն, ես նրա մերը»: (8)

Այս տրամաբանությամբ ու վճռականությամբ է օժտված նաև ապրիլյան պատերազմի հերոս Գեղամ Խաչատրյանը. «Ախր հողն այս իմ ընկերների արյանք է շնչում, թուրքին հո չենք թողնելու...Ինչ էլ որ լինի՝ հաղթանակը մերն է լինելու, մենք ենք հաղթելու»: (9)

Նկատենք, ազգային բնավորության գծերը հիմնականում դրսևորվում են ամենաէքստրեմալ պայմաններում՝ պատերազմական իրավիճակներում: Մեր հերոսները գործում են ոչ թե պահի թելադրանքով, այլև նրանց մեջ արդեն իսկ նախաստեղծ՝ հայի գենոտիպին հատուկ որակմերով, այսինքն՝ դրանք ազգային ոգու ակունքներից են զալիս: Եվ հողից հայրենի, որից սերվել են նրանք: Այսօրվա հերոս-զինվորի մեջ հոսում է Տիգրան Մեծի, Վարդան Մամիկոնյանի, Գևորգ Մարզպետունու, Ղավիթ Բեկի, Սամվելի, Վարդանի, Ավոյի, Բեկորի արյունը:

Ազգային կերպարների կերտման բացառիկ վարպետություն է դրսևորում «ուշ ռոմանտիզմի խոշոր» հսկան՝ Մուրացանը, նա ոչ միայն լարված գործողությունների ու հոգեբանական բարդ իրավիճակների միջոցով է միայն ներկայացնում իր հերոսների ամբողջական նկարագիրը, այլ դիմում է ժողովրդական հարուստ ասացվածքների՝ «Մի ծաղկով գարուն», «Կույր աչքը կների, կույր սիրտը չի ների»... Բազմաթիվ են ժողովրդական մտածողության այդ խտա-

ցումները, որոնք առաջնային դեր ունեն թե՛ վիպական սյուժեների, թե՛ կերպարների ամբողջացման, թե՛ ազգային արժեհամակարգի ներկայացման առումով: Եվ այսօրվա մեր հերոսների կողմից որդեգոված փիլիսոփայական կարգախոսը՝ «Կյանքս՝ հայրենիքիս, պատիվս՝ ինձ, հոգիս՝ Աստծուն», իր արմատներով, անշուշտ, գալիս է մեր պատմության խորքերից:

Հայրենիքը և Աստված ոգի են տալիս հայ զինվորին: Իսկ ոգին այն ուժն է, որի առաջ ամենագերժամանակակից գենքերն անգամ թույլ են: Եվ պատահական չէ, որ Մուրացանը, ինչպես նաև մեր մյուս մեծերը, իրենց հերոսների կերպարները թրծում են ազգային ոգու անմարելի կրակի մեջ: Այստեղից է՝ գրեթե հայկականացված «պայքարի ոգի» արտահայտությունը:

Ազգային արժեհամակարգի պահպանման ու փոխանցման լավագույն հողը հայրենիքն է, քանի որ. «Ժողովուրդը և հողը պատկանում են միմյանց, ամեն մի տարածք և հողակտոր դեռ հայրենիք չէ: Հայրենիքը պատմական հող է, բնօրբան: Տարածքն ու Հայրենիքը դարերի ընթացքում ունենում են ներգործուն փոխազդեցություն: Հողը հայրենիք է դառնում, երբ այն վերածվում է պատմական հուշերի և պատկերների շտեմարանի, ուր ապրում են տվյալ ժողովրդի իմաստունները, ուր սրբերն ու հերոսները, լեռներն ու ծորենը սրբազործվում են: Այս ամենը հայրենիքը դարձնում են միակը և անկրկնելին» (10) (Էնթոնի Սմիթ): Հայրենիքն այն հզոր գործոնն է, որն ապահովում է ժողովրդի գոյապահպանման ու զարգացման հնարավորությունը: Առանց հայրենիքի ազգը՝ որպես էթնոս գոյություն ունենալ չի կարող: Ասել է թե՝ հայրենիքն ու հայրենասիրությունը ժողովրդի գոյության հիմնական պայմանն են: Հայրենիքը ժողովրդի բոլոր սերունդների դարավոր, հերոսական պայքարի արդյունք է: Հայրենի հողի համար զոհվելը հերոսություն է: Հերոսների արյունով ներծծված հողը քաշերի համար նոր սերունդներ է կյանքի կոչում: Մեծն Գարեգին Նժդեհն ասել է. «Ինչ երանություն է մեռնել այն հուսավառ հավատքով, որ քո աճյունից շանթանման հերոսներ պիտի ծնվեն»: (11)

Ազգային հատկանիշների մեջ իր ուրույն տեղն ունի հավատն առ Աստված, հատկանիշ, որ դարերի ընթացքում միայն ամրապնդվել է: Հայը միշտ էլ առաջնային է համարել հոգևորը, նա միշտ հավատարիմ է եղել իր դավանած Աստծուն և իր փրկությունը տեսել նրան երկրպագելու և հանուն նրա իր կյանքը զոհելու մեջ: Հայ ժողովուրդը երբեք հոյսը չի կտրել Աստծուց, ամենածայրահեղ վի-

Ճակներում նա ապավինել է Երևան Է նրան առաջնորդում դեպի ազատության համար անզիջում պայքար: Մուրացանի հերոսները նույնպես ապավինում են Բարձրյալին: Ահավասիկ, Մարզպետունու խոսք-պատգամն՝ ուղղված իր գինվորներին. «Բայց ես հույս դրի Աստծո և իմ կամքի վրա և, ինչպես գիտեք, հաղթեցի ամեն դժվարության. ցույց տվի աշխարհին, թե ինչ կարող է անել մի մարդը, եթե նրան ոգևորում է զգացմունքներից ազնվագույնը, այն է՝ հայրենիքի սերը: Չեզանից ամեն մինը թող գինվի այն հավատով, որ ունեի ես դեպի հայրենյաց ապագան, այն սիրով, որ տածում էի դեպի իմ եղբայրները և այն հույսով, որ դրել էի Աստծո վրա և կտեսնե, որ անկարելին կարելի կդառնա, և արգելքներն իրանք իրանց կվերանան և վտանգներն անհետ կկորչեն»: (12)

Ապրիլյան պատերազմում մեր մարտիրոսված հերոս տղաները՝ «տասնութ-քսան տարեկան», իրենց վերջին խոսքում կրկին դիմել են Աստծուն: Այսպես է ինչում Հրազ Գալստյանի խոսքը զոհվելուց առաջ. «Կարոտել եմ բոլորիդ, մամ, այսօր անպայման եխծի գնա, մոմեր վառիր»: (13)

Սուրեն ու Խաչը միշտ միասին են մարտնչել թշնամու դեմ: Հայրենիքի փրկության վեհ գաղափարը միայն ենթադրում է հավատ ու միաբանություն: Նկատենք, Մուրացանի յուրաքանչյուր հերոս կրում է իր մեջ հայրենասիրության հուրը, անկախ ամեն ինչից, նրանց մեջ ամենաբարձրը, անձնականից վերը հայրենիքի պատիվն է: Նրանցից յուրաքանչյուրը տոգորված է «ազնվագույն զգացումնվ»՝ հայրենիքի սիրով: Ոչ վերացական, այլ կոնկրետ ու շոշափելի իրական:

Աշոտ Երկաթը հայրենիքի համար զոհում է իրեն՝ դրա մեջ իր հոգու մեջ պարտքը տեսնելով. «Կովի մեջ ստացած մահը կարող է իմ անունը փառավորել: Ես, իհարկե, չեմ մտածում իմ հիշատակի, այլ հայորդիների մասին, իմ մահվամբ ես մի խրախուսական օրինակ կլողնեմ նրանց համար...»: (14)

Ազնվագույն գծերով է օժտված Սահակ Սևադան, չնայած անձնական դառը ու խորը վշտին, նրա մեջ առաջնայինը հայրենյաց շահն է: Միաբանության կոչող Մարզպետունուն նա պատվախնդրությունից դրդված՝ ասում է. «Ես չեմ ուզում, որ դու հայրենասիրությամբդ գերազանցես ինձ: Ես թողնում եմ իմ Վրեմիսնդրությունը»: (15) Մի՞թե ապրիլյան պատերազմում այդպես չվարվեց նաև Քյարամ Սլոյանը. «Ոչ, իրամանատար, ես պիտի լինեմ քո կողքին»: (16) Դա այն դեպքում, եթե իրամանատարը նրան առաջարկել էր

նահանջել՝ կյանքը փրկելու համար:

Անձնական պատիվը հայրենիքի պատվին է ստորադասում նաև Ցլիկ Ամրամը. «Երանի նրան, ով կարող է անձնվիրաբար ծառայել հայրենիքին»: (17)

Իհարկե, հնարավոր չէ ասել, թե գրական հերոսների ազդեցությունը նրանց խիզախումներում ինչ տոկոսայնություն ունի, բայց որ որոշակի դերակատարություն ունի, դա անժխտելի է:

Ինչպես տեսնում ենք, Մուլրացանի կերտած բոլոր (կամ՝ գրեթե բոլոր) հերոսներն անմնացորդ ձևով մարմնավորում են հայրենի երկրի, հողի այն բնութագրական կողմերը, որոնք ավելի ամբողջական են դարձնում վիպասանի կերտած հերոսների հարուստ ու բազմերանգ, խիստ ազգային ու, դրանով իսկ՝ համամարդկային պատկերասրահը:

Ամփոփման կարգով նշենք, որ թե՛ երեկվա, թե՛ այսօրվա հերոսներն իրենց մեջ կրում են ազգային բնավորության առանձնահատկությունները: Առաջնորդվելով հոգու վեհությամբ ու ազնվությամբ, հայրենիքի հանդեպ պարտքի ու սեփական պատվի բարձր գիտակցությամբ, նրանք գնում են աննախադեպ խիզախման: Նրանց գերագույն նպատակը հայրենիքի փրկությունն է, որի համար բերում են իրենց ողջակեզզը: Սրանք այն վեհ ու վսեմ հատկանիշներն են, որոնցով ազգի դիմագիծը ներկայանում է ավելի հստակ ու ամբողջական: Եվ դրանց պահպանման ու զարգացման, հարատևման մեջ է հայի ֆենոմենը, ավելի կոնկրետ՝ հայկական ոգին: Խոսքը վերջացնեմ Սերգեյ Սարինյանի մի հետաքրքիր ոիտարկումով՝ «Հայոց ազգային գաղափարախոսություն» գրքից, որը լավագույն ձևով է արտահայտում հայի էությունը: Ահա. «Պատմության ընդերքում գործել է աշերևույթ աննկատելի կենսա-հիգիենական մի դրդում, որի գիտակցումը խորապես գրավիչ է ծագումնաբանության առասպելի փիլիսոփայական խորհուրդը բացահայտելու տեսակետից: Նկատի ունեմ հայոց ազգային ոգու ֆենոմենության: Որպես պատմափիլիսոփայական ներարժեք ձևույթ՝ Հայկական հարցը ազգային ոգու՝ իբրև տիեզերական սուբյեկտի ինքնագիտակցումն է, հայկական ֆենոմենի համաշխարհային ճանաչման ներքին թելադրանքը»: (18)

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Իսահակյան Ավ., Երկերի ժողովածու, հատոր հինգերորդ, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1977, էջ 41:

2. Զարենց Ե., Ընտիր Երկեր, Երևան «Նախրի» հրատարակչություն, 1997թ., էջ 196:
3. <http://andin.am>
  4. <http://www.noravank.am>
  5. Մուրացան, Ռուզան, Հայպետիրատ, Երևան, 1944, էջ 66:
  6. Նույն տեղում, էջ 90:
  7. Մուրացան, Գևորգ Մարգարետունի, «Լույս» հրատարակչություն, Երևան, 1988, էջ 219:
  8. «Եղիցի լույս» թերթ, թիվ 02, 2016թ.:
  9. Նույն տեղում:
  10. <https://www.hayagitaran.am>
  11. Համբարձումյան Ռ., Գարեգին Նժդեհ, «Նախիջևան» հրատարակչություն, Երևան, 2008, էջ 169:
  12. Մուրացան, Գևորգ Մարգարետունի, «Լույս» հրատարակչություն, Երևան, 1988, էջ 354:
  13. «Եղիցի լույս» թերթ, թիվ 02, 2016:
  14. Մուրացան, Գևորգ Մարգարետունի, «Լույս» հրատարակչություն, Երևան, 1988, էջ 235:
  15. Նույն տեղում, էջ 96:
  16. «Եղիցի լույս» թերթ, թիվ 02, 2016:
  17. Մուրացան, Գևորգ Մարգարետունի, «Լույս» հրատարակչություն, Երևան, 1988, էջ 108:
  18. Սարինյան Ս., Հայոց ազգային գաղափարաբանություն, «Զանգակ» հրատարակչություն, Երևան, 2005, էջ 287:

### **ԱՄՓՈՓՈՒՄ**

**ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՄԵՋ ԱԶԳԱՅԻՆ ԲՆԱԿՈՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋՎԱԿԱՏՈՒԿ ԳԾԵՐԻ ՎԵՐԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ  
ԿԱՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԵՆՈՄԵՆՈՒԹԻՒՆ**

### **ԱՄԱՅՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Հոդվածում ցույց է տրվում գրականության վճռորոշ դերակատարությունը սերունդներին ազգային ոգով դաստիարակելու գործում: Ա. Գրիգորյանի հետազոտության թեման մեր ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի գեղարվեստական տարեգրությունն է՝ իին ժամանակներից մինչև մեր օրերը: Հեղինակը հանգա-

մանորեն անդրադառնում է Մուրացանի ստեղծած գրական կերպարներին և գիտական վերլուծությունների, համադրումների ու համեմատությունների միջոցով՝ մի ընդգրկուն համապատերի մեջ, ներկայացնում հերոսական այն գծերը, որոնցով առանձնանում են հայ քաջորդիները: Ազատագրական պայքարում վերջիններիս դրսեորած ազգային բնորոշ հատկանիշներն են, որոնք կազմում են հայկական ֆենոմենոլոգիայի միջուկը հարստացնելով մեր ժողովրդի հոգևոր արժեհամակարգը: Հոդվածի մեջ վերլուծության է Ենթարկվում նաև ժամանակակից գրող Վ. Հակոբյանի «Կենդանի պատ» պոեմը. արցախյան գոյամարտի մերօրյա հերոսների և նրանց նախորդների՝ Գևորգ Մարգարետունու, Աշոտ Երկաթի, Ուղարկանի, մյուս Երևելիների հայրենասիրական սիրանքներն ու արարքները դիտարկվում են մի զուգահեռի վրա:

## РЕЗЮМЕ

### ВОСПРОИЗВЕДЕНИЕ В ПОКОЛЕНИЯХ НАЦИОНАЛЬНОГО ХАРАКТЕРА И СПЕЦИФИЧЕСКИХ ЧЕРТ ПОСРЕДСТВОМ ЛИТЕРАТУРЫ ИЛИ АРМЯНСКАЯ ФЕНОМЕНОЛОГИЯ

#### АМАЛИЯ ГРИГОРЯН

**Ключевые слова:** национальная идеология, научно-художественная система, литературный герой, романист, исторический роман, армянская феноменология, народное мышление, сюжет романа, философия храбрости, феномен, поэма.

В статье представлена решающая роль литературы в деле воспитания поколений в национальном духе. Тема исследования А. Григорян - художественная летопись национально-освободительной борьбы нашего народа с древнейших времен до наших дней. Автор подробно обращается к литературным образам, созданным Мурацаном, представляет в единой панораме с помощью научных анализов, контрастов и сравнений те героические черты, которыми отличаются армянские храбрецы. В национально-освободительной борьбе проявляются их характерные черты, которые составляют сущность армянской феноменологии, обогащая духовные ценности нашего народа. В статье также подвергается анализу поэма "Живая стена"

современного писателя В. Акопяна, на одной параллели рассматриваются патриотические подвиги и поступки сегодняшних героев Арцахской освободительной борьбы и их предшественников: Геворка Марзпетуни, Ашота Ерката, Рузан и других выдающихся личностей.

## SUMMARY

### GENERATIONS THROUGH LITERATURE OR REPRODUCTION OF NATIONAL CHARACTER AND UNIQUE LINES OF PHENOMENOLOGY

AMALIA GRIGORYAN

**Key words:** national ideology, aesthetic system of values, literary hero, novelist, historical novel, Armenian phenomenology, national thinking, the plot of novel, philosophy of venture, phenomenon, poem.

The article shows the decisive role of literature in education of generations in a national spirit. The theme of A. Grigoryan's research is our people's national liberation fight chronicle from old times up to now. The author thoroughly refers to the literary heroes created by Muratsan and through the scientific analyses and comparisons in a broad context, she shows the heroic features peculiar to our heroes. The core of Armenian phenomenology that enriches the spiritual values of our people is based on the national peculiarities of our heroes revealed in liberation struggle. The article deals with the analysis of poem "Living Wall" by V. Hakobyan. Patriotic deeds and actions of our modern day Artsakh heroes and their ancestors Gevorg Marzpetuni, Ashot Erkat, Rusan and others are considered on the same parallel.